# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● *Կիր. 7 Մայիս.* — Տօն Երեւման Ս. Խաչին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վրթանէս Արղ. Գալայճեան: Կարդացուեցաւ Ս. Կիւրեղ Հայրապետի Կոստանդ կայսեր ուղղած Թուղթը՝ Ս. Խաչի լուսաւոր երեւումին առիթով: Աւագ Սեղանին վրայ կը տեսնուէր Ս. Խաչին նշանը՝ վառ կանթեղներով զարդարուն:*

● *Շբ. 13 Մայիս.* — *Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան Աւագ Սարկաւագ ձեռնադրեց Ս. Յարութեան Տաճարի Լուսարար՝ Ուրարակիր Տրդ. Մկրտիչ Եօթնեղբայրեանը, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ՝ ուր կատարուած էր կոչման արարողութիւնը նախորդ երեկոյ:*

● *Կիր. 14 Մայիս.* — *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:*

● *Դշ. 17 Մայիս.* — *Վաղուան Համբարձման տօնին առիթով, կէսօրէ վերջ ժամը 2ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրի շրջափակին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու մեծահանդէս նախատօնակը: Իրիկնադէմին պաշտուեցան նաև «Ընկեցէ»ի և Հսկման կարգեր և այլ առաւօտեան ժամերգութիւն: Արարողութիւնները վերջ գտան գիշերուան ժամը 10ին:*

● *Եշ. 18 Մայիս.* — ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՆ: *Առաւօտեան ժամը 6.30ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Ձիթենեաց լեռ և «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր մեր վրանամատրան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան: Քարոզէն ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք»՝ Մայր Աթոռոյ Սրբոյն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձի առիթով: Իսկ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Պատարագիչ Սրբազանը նախագահեց Սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին:*

*— Կէսօրէ վերջ եւ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի:*

● *Շբ. 20 Մայիս.* — *Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Նորընծայ Արժ. Տ. Սեդրաք Քհնյ. Խաչատուրեան:*

*— Կէսօրէ վերջ, նոյն եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Բ. Ծաղկազարդի Նախատօնակը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան:*

● *Կիր. 21 Մայիս.* — Երկրորդ Ծաղկազարդ: *Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նապարեան:*

● *Շբ. 27 Մայիս.* — *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:*

*— Հոգեգալստեան մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:*

*— Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Ընկեցէ»ի և Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան:*

● *Կիր. 28 Մայիս.* — ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ: *Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ս. Պատարագի ընթացքին, երեք եպիսկոպոսներու կողմէ կարդացուեցաւ Ս. Յովհ. Ոսկեբերանի Հոգեգալստեան Ներբողը: Իսկ Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար:*

● *Շբ. 3 Յունիս.* — Է. օր Հոգեգալստեան: *Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տանիքը՝ Ս. Հոգւոյն Նուիրուած մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:*

● *Կիր. 4 Յունիս.* — Յիշատակ Եղիայի մարգարէին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան: Քարոզեց Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան, խօսելով կրօնական արժէքներու հանդէպ նախանձախնդիր ըլլալու առաքինութեան շուրջ, ու ներկայացնելով օրուան տօնելի սուրբը — Եղիա մարգարէն — իբրև տիպար նախանձայուզութեան:*

*— Ս. Հռիփսիմեանց Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան:*

● *Բշ. 5 Յունիս.* — Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: *Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետս, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. Պայրամեան: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ վանուց Տեսչարանին մէջ:*

● *Ուր. 9 Յունիս.* — *Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան:*

● *Շբ. 10 Յունիս.* — Ս. Գրիգորի Լուսաւորչին Ելն ի վիրապէն *տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս.*

digitised by A.R.A.R.@

Լուսաւորչի սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։ Ըստ սովորութեան, արարողութեանց աւարտին երգուեցաւ «Տէր ողորմեա»։

● Կիր. 11 Յունիս. — Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատուրեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիկեան, ծանրանալով Ս. Էջմիածնի շարականի 2րդ տունին վրայ ու վեր առնելով այն կենսական դերը՝ որ Մայր Աթոռինն է եղած, մեր դարաւոր պատմութեան երկայնքին և կեանքի զանազան մարզերու մէջ։ Քարոզէն ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր Նախագահութեամբ, կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք»։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան»։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան։

● Կիր. 18 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Պատարագեց և քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, բնաբան ունենալով «Եկայք առ իս, ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։ Ցոյց տուաւ թէ Տիրոջ երթալու համար ի՞նչ հոգի ունենալու է մարդ — բարի, ազնիւ, կարեկից, վերջապէս՝ համառօտ՝ քրիստոնէական առաքինութիւններով։

● Ուր. 23 Յունիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան։

— Երեկոյեան ժամը 7ին, Կ. Պոլսէն Ս. Աթոռ հասաւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Գարեգին Արքեպս. Խաչատուրեանի վախճանումը գուժող հեռագիրը։ Մայրավանքի մեծ զանգը, ընդհատ ընդհատ զարկերով, անմիջապէս գոյժը հաղորդեց ժողովուրդին։

● Շբ. 24 Յունիս. — Ս. Գրիգոր Լուսաւորչին Նշխարաց գիւտի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

● Կիր. 25 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատուրեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր, բնաբան ունենալով օրուան ճաշու Աւետարանէն «Վարդապետ, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն»։ Ըսաւ թէ Աստուած բազում անգամներ ու բազում նշաններով յայտնած է ինքզինքը մարդկութեան ու կը յայտնէ։ Մենք սովոր ենք այդ նշանները կոչել հրաշքներ: Պէտք չէ սակայն մոռնալ թէ մարդ արարածն ու բնութիւնը մեծագոյններն են Տիրոջ հրաշալիքներուն։ Ցոյց տուաւ Ս. Երրորդութեան, Քրիստոսի Մարդեղութեան և Ս. Հաղորդութեան խորհուրդները իբրև մարդը իր Արարչին հետ չփման մէջ դնող մեծագոյն ազդակները։

● Դշ. 28 Յունիս. — Թարգմանչաց Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան։

● Եշ. 29 Յունիս. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիկեան։ Քարոզի բնաբանն էր օրուան ճաշու Աւետարանէն, «Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն»։ Հոգշ. Հայրը խօսեցաւ Թարգմանիչ Հայրերու կատարած անչափելի զոհողութիւններու մասին։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ հայ մտքի բոլոր վաստակաւոր մշակներու հոգիներուն համար, Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Կիր. 7 Մայիս. — Գիշերուան ժամը 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Միաբան Հայրերու, ներկայ եղաւ Ժառանգ. Վարժարանի հանդիսասրահին մէջ, Պէյրութէն ժամանած Պր. Սահակ Խաչատուրեանի Երգահանդէսին և երեկոյթի աւարտին ըրաւ փակման խօսքը։ Շնորհալի մեներգիչին (որ եղբայրն է Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Արշակ Արեգայի և Արժ. Տ. Սեդրաք Քհնյ.ի) դաշնակի վրայ կ'ընկերակցէր անուանի դաշնակահար Օկոսթին Լամա։

● Դշ. 24 Մայիս. — Իսլամաց Գուրպան պայրամի առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեանի և Քարտուղար Տիար Կարպիս Հինդլեանի, շնորհաւորութեան գնաց Վսեմ. Մուհաֆըզին, Ոստիկանապետին, Քաղաքապետին և Սէուտի Արաբիոյ Հիւպատոսին։

● Ուր. 26 Մայիս. — Երեկոյեան ժամը 7ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Նախագահեց Ժառնգ. Վարժարանի հանդիսասրահին մէջ կայացած Գալայճեան աշակերտ - աշակերտուհիներու Դաշնամուրի Նուագածութեան Հանդէսին, որուն աւարտին իր գնահատանքի խօսքը ըրաւ հանդէսին կազմակերպիչներուն՝ դաշնակահար և Ժառանգ. Վարժարանի երաժշտութեան ուսուցիչ Պր. Վահէ Գալայճեանի և իր շնորհալի քրոջ՝ Օր. Արշալոյսի։

● Ուր. 2 Յունիս. — Իտալիոյ ազգային տօնին առթիւ, կէսօրէ վերջ, Իտալական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. և Տիար Կ. Հինդլեան։

● Շբ. 3 Յունիս. — Ժառանգ. Վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վար-

digitised by A.R.A.R.@

ղանեան մեկնեցաւ Սուրիա-Լիբանան, յառաջիկայ դպրոցական տարեշրջանին համար վարժարանին նոր սաներ արձանագրելու։

— Կէսօրէ վերջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., ի գլուխ Միաբան Հարց, բացումը կատարեց Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի Տարեկան Պազարին։

● Կիր. 4 Յունիս. — Առաւօտուն, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան մեկնեցաւ Ամման, ուր նախագահեց Հեթումեան Ազգ. Վարժարանի Ամավերջի Հանդէսին, որ տեղի ունեցաւ կ. ա. ժամը 9ին, Սինէմա Փէթրայի մէջ։ Հանդէսի աւարտին, Գերշ. Սրբազանը բաժնեց 8 երկսեռ շրջանաւարտներու ուսումնական վկայականները։

● Շբ. 10 Յունիս. — Անգլիոյ Էլիզապէթ Բ. Թագուհիի ծննդեան 35րդ տարեդարձի առթիւ, կէսօրէ վերջ, Անգլիական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Բշ. 19 Յունիս. — Առաւօտեան ժամը 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց ժառնգ. Վարժ.ի և Ընծայարանի, ինչպէս նաև Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Ամավերջի Քննութեանց։

● Դշ. 21 Յունիս. — Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Դաւիթ Վրդ. Սահակեան, որ կը վարէր Ամմանի Հոգևոր Հովուութեան պաշտօնը, օդային գծով մեկնեցաւ իր նոր պաշտօնավայրը՝ Պաղտատ։

● Եշ. 22 Յունիս. — Հոգշ. Տ. Վրթանէս Արղ. Գալայճեան, որ տարիէ մը ի վեր կը վարէր Ս. Աթոռոյս Տպարանի Տեսչութիւնը, մեկնեցաւ Ամման, ստանձնելու համար իր նոր պաշտօնը՝ որպէս Հոգևոր Հովիւ Արևելեան Յորդանանի։

● Շբ. 24 Յունիս. — Եւրոպացւոց Ս. Յովհ. Մկրտչի ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ վերջ, Սէյնթ Ճօնզ Ակնաբուժարանի վարչութեան կողմէ տրուած թէյասեղանին ներկայ եղան Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. և Տիար Կարպիս Հինդլեան։

● Կիր. 25 Յունիս. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեանն ու Տիար Կ. Հինդլեանը, ներկայ գտնուեցաւ Յոյն-Կաթոլիկներու եկեղեցւոյն մէջ, քաղաքիս Յոյն-Կաթոլիկ համայնքի Մեծաւոր Գերշ. Արքիմանտրիթ Ծիպրայիլ Ապու-Սաատայի եպիսկոպոսական ձեռնադրութեան՝ զոր կատարեց Յոյն-Կաթոլիկներու Միջին Արևելքի Պատրիարք Ն. Ամեն. Մաքսիմոս Դ.։

— Կէսօրէ վերջ, Ն. Ամեն. Մաքսիմոս Պատրիարքին ի պատիւ, Սէյնթ Անն վանքին մէջ տրուած թէյասեղանին ներկայ եղան Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Աճէմեան, Հոգշ. Տ. Գեղամ Արղ. Ջաքարեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Գշ. 27 Յունիս. — Կէսօրէ առաջ, Յոյն-Կաթոլիկներու Ամեն. Տ. Մաքսիմոս Պատրիարքը իր հետևորդներով այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Միաբանութեան անդամներուն կողմէ։

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Յունիսի 13ին, օդի ճամբով քաղաքս ժամանեց Պր. Կորիւն Քէչիչեան, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հայկական բաժնի քարտուղարը, իր ազն. տիկնոջ ընկերակցութեամբ։

Պատուարժան այցելուները Պատրիարքարանիս հիւր եղան երկու օրեր միայն, որոնց ընթացքին այցելեցին Սրբավայրերը և ըրին իրենց ուխտը։

Պր. Կ. Քէչիչեան հետաքրքրուեցաւ Վանքիս գործերու այժմու կացութեան և մանաւորաբար նպատակընկալ հաստատութիւններու նիւթական վիճակով։

Տէր և Տիկին Քէչիչեանները, Ս. Պատրիարք Հօր ընկերակցութեամբ, այցելեցին նաև Ամման, ուր հիւրասիրուեցան Ամմանի Հայոց Վարչութեան Ատենապետ Պր. Հայկ Փէլթէքեանի տան մէջ։ Ապա այցելեցին կառուցուելիք նոր վարժարանին համար գնուած հողամասը։

Յունիսի 15ին, պատուարժան հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին Ս. Պատրիարքին և գոհ տպաւորութեամբ մեկնեցան։

## ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
## Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կիրակի, 11 Յունիսի կէսօրէ վերջ ժամը 4ին, ժառնգ. Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Տարեկան Դաշտահանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան Միաբան Հայրերու և ժողովուրդի հոծ բազմութեան։

Հանդէսը սկսաւ մարզիկներու տողանցքով, մասնակցութեամբ վարժարանիս երկու մարզական խումբերուն — Մասիս (կանաչ) և Արարատ (կարմիր) —, ինչպէս նաև Արենոյշներուն ու Արծուիկներուն՝ բաժնուած զարձեալ երկու խումբերու — Երեւան (կարմիր) և Սեւան (կապոյտ) —։ Ապա, աւելի քան երկու ժամերու ընթացքին, երկսեռ մարզիկները յաջողութեամբ կատարեցին 50-600 մեթր վազքեր, բարձր և երկար ցատկումներ, մարզանքներ, զուարճախաղեր, բուրգեր, դրօշարշաւ, պարանաձգութիւն, և այլն, որոնք ի յայտ կը բերէին իմացական կրթութեան կողքին ֆիզիքական դաստիարակութեան ընծայուած կարևորութիւնն ու խնամքը վարժարանէն ներս, գլխաւորութեամբ մարզիչ Պր. Պօղոս Աբրահամեանի և աղջկանց մարզիչ Օր. Շուշան Յովսէփեանի։

Դաշտահանդէսի աւարտին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը պարգևատրեց յաջող մարզիկները բաժակներով ու մետալներով։

digitised by A.R.A.R.@